Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
T-35

19 NOV 2011
891.99 ԿՐ
Դ-35
Հ.Ս.Խ.Հ. ՀԼՍԻԱՅԻ ՊՐԱՊԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրադարան
7/XI 1922
Имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1001/587

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՍԱՐԵՔՅԱՆ

ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ

ԱՇՈՒՂԻ ՀԷՔԻԱԹԸ

Հրատարակութիւն
ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
ԵՒ ԸՆԿ.

ԹԻՖԼԻԶ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Միխայէլեան Փող. 81.

0 2 MAR 2013

27.979

Дозволено цензурою 17 Февраля 1904 г. Гор. Тифлисъ.

Բաղդի Հայոց
Հոմիսմեան Դպրոց
Էջմ.-ծիսակ. (օրիորդաց)

ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ

Օդի մէջ մի քաղցր, թեթև շունչ կայ, որ գարուն է յիշեցնում։

Բայց նա արդէն եկել է։ Սար ու ձոր սևացել են արդէն։ Դաշտերը կարծես մէկի ձեռքով սրբած ալած են ու մաքուր։ Եւ բարձրանում է գոլորշին արևի ջերմութիւնից, առագաստի ձևեր տալիս, հաւաքւում ու բաժանւում է հսկայական վարագոյրի պէս։ Եւ ծայրը արդէն հասել է երկինք։

Բայց դեռ ո՞ւր է կանանչ, ո՞ւր է ծաղիկ—նրանք չեն երևում։ Տեղ-տեղ միայն, այն էլ է հազարից մին, կը տեսնես որ ահա կանանչը գաղտուկ դուրս եկել՝ քեզ է մտիկ տալիս։ «Գարունը եկել է»... ասում ես և զգում, որ սիրտդ այնպէս է ճխում, ոնց որ վճիտ երկինք տեսած արտուտ։ Ճխում է նա, և քաղցր մաքում կրծքիդ տակ, և այնպէս ուզում ես ապրել...

Բարձր սարի ծայրին դեռ ձիւն կայ նստած։ Բայց նրա աչքերն էլ լցւել են ուրախութեան արցունքներով, նա էլ փուլ է գալիս։

Մենակեաց, մտածկոտ գիւղերով և սև արտերով ծանրաբեռնւած դաշտը քանի գնում ալիք է խփում, դառնում բլուր։ Նա էլ գնում խոժոռանում է և վերջանում բարձր անդնդաբաժան լեռնուտով, որոնց միջից,

ալեզարդ քուրմի նման, ահա բաց է արել իր դալուկ ճակատը մի կոնաձև գագաթ,

Եւ աղօթում։

Կարծես անհուն դարերից 'ի վեր՝ նա հարցում է տալիս երկնքի անհուն կապոյտում սաւառնող ոգիներին և պատասխանի սպասելով սառել—մնացել է։

Հոգին ու հողմը այնտեղ զարթնելով՝ բաց են անում իրանց թևերը, շնչում—թռչում և ոստոստելով լեռների ու բլուրների ծայրին՝ սուրալով գալիս խուժում են ձորերը և այնտեղից դուրս սահելով՝ գնում են թափառում լայն-լայն դաշտերում և չափ ընկնելով գնում կորչում հեռուները։

Գարունքին բնութիւնը հաշտւում է մարդու հետ։ Ցանկանում ես ընկնես նրա գիրկը և թափես նրա առաջ թագցրած խոստովանքդ։

Գեղջուկը գիմում է ուխտագնացութեան։

Տօն օր է։ Դէպի բլուրների ծայրը տանող նեղլիկ ու քարքարոտ շաւիղը կենդանացել է մարդկանց հատուկտոր խմբերով։

Մատուռ են գնում։

Դատարկւած գիւղերից մէկի տան առաջ կանգնել էին մի քանի գիւղացի, որ նոր էին պատրաստւում մատուռ գնալու։

Երեխաները անհանգիստ ելումուտ էին անում խրճիթի դռնից և երկար ճիպոտները ձի արած՝ վազվզում էին դէս ու դէն։

Գիւղացիներից մինը անհամբեր ձայն տւեց նրանց.

—Մի գնացէք՝ ասէք՝ շտապեն, է. ուշանում ենք։

Կանայք դեռ պատրաստ չէին։

Իսկ երբ սպասողների համբերութիւնը հատաւ, մէկը ներս ընկաւ թնդալով.

—Օհո, էրնակ ձեզ, էլ ի՞նչ ենք ուզում. տո, դէ շուտ արէք, հարսանիք հո չենք գնում։

Կանայք լուռ փութաթեցին կապոցները և բալուշած երեխաները գրկելով՝ դուրս ելան։ Եւ խումբը սկսեց ծանր ու բարակ ոտ վերցնելը։ Կանայք առաջ ընկան, որը ոտաբոբիկ, որը նոր ոտնամաններով։ Զուգւել պաճուճւել էին, ով ինչով կարողացել էր։

Երբ գիւղից դուրս եկան, կանանց մէջ հասակների խառնուրդը պարզւեց։ Պառաւները մօտեցան իրար և սկսեցին հեալով, անքալով, գլուխ գլխի տալով քաշ գալը։ Իսկ հարսներն ու աղջիկները աւելի առաջ ընկան՝ սկզբում իրար ականջի քչփչալով, իսկ երբ տարածութիւնը անվտանգ դառաւ, ձայները բարձրացրին։

Սրտակից ու սրտին մօտիկ խօսակցութիւն։

Նրանց մէջ աչքի էր զարկում մի ջահիլ, դալկադէմ և նազելի նորահարս։ Դէմքից երևում էր, որ բնութիւնը մի ժամանակ հանգիստ խղճով ընտրել էր նրան և շնորհել շատերից խնայած մի ներդաշնակ գեղեցկութիւն։

Իսկ հիմա ո՞ւր էր նա—այդ գեղեցկութիւնը։

Ինչոր մի գաղտնի, երկարատև և անգութ հիւանդութիւն կաշկանդելով նրա ողջ էութիւնը՝ աղաւաղել էր դէմքի գրաւիչ գծերը։

Նրա մէջ մի ժամանակ բացաւառ կեանքի խարոյկը անցել էր արդէն և մնացել էին մի քանի աղօտ կայծեր, որոնք նրա աչքերում անհանգիստ շողում էին։ Նայողը կասէր, որ նրա հոգու մէջ մոխրի տակ, ամենքից ծածուկ, մի բան կար թագնւած։

Նա գրկին ունէր մի երեխայ, որ ջղաձգօրէն ոլորւում ու տրորւում էր և անհանգիստ ծւոցով զժգոհում՝ չես իմանում ինչից։

Մայրը կանգ առաւ յոգնած։ Պառաւները հասան նրան և «յոգնեցի՞ր, հա՛. դէ նստիր» ասելով անցկացան մօտով։

Այդ ժամանակ տղամարդերից մինը, մի խոժոռահայեաց, բայց և ՝սիրունատես երիտասարդ, առաջ անցաւ իր խմբից և մօտենալով յոգնած կնոջը՝ լուռ նայեց նրան և ձեռից առնելով երեխան՝ հազիւ լսելի ձայնով ասաւ.

—Առաջ անցիր։

Հարսը շտապեց։ Տղամարդիկ հասան. նրանցից մինը դարձաւ մի հասակաւոր տղամարդի, որ այն հարսի ամուսինն էր, և ծիծաղելով ձայն տուեց.

—Այ մարդ, տես ի՞նչ սրտացաւ քաւոր ունիս. դու էն ասա, որ հէնց իրա տեղը ոնց էլ պէտք եկաւ։

Ու հռհռաց ռամիկ ձայնով։

Կնոջ ամուսինը ոչինչ չ՝պատասխանեց, այլ միայն կոպիտ ժպիտը ծռելով հաստ շուրթերի մօտ, նայեց խօսակցին։ Միւսները քոքռացին ու շարունակեցին իրանց ընդհատուած խօսակցութիւնը։

Եւ խառնուելով ուրիշ ուխտաւորներին՝ սկսեցին կամաց-կամաց սարնիվեր քաշ գալը։

Փոքրիկ սարի ծայրին, կիսաւեր, իր մամռոտ տաբիների մէջ փաթաթուած՝ ահա երևում է նա—մատուռը։

Հազիւ է պատահում, որ ուրիշ օր մարդ մօտենայ այդ մատուռին։ Լեռների չիսօսկան հովիւը միայն մէկ-մէկ մօտիկ քշելով ոչխարի հօտը՝ մատուռ է մտնում, վեր է առնում ժորթէ իւղոտ փափախը և անվարժ խաչակնքելով՝ մոմածեի վէմը համբուրում ու դուրս է գալիս՝ չհասկանալով անգամ թէ մտքումն ի՞նչ աղօթեց։

Այսօր ուրիշ է բայց։ Անյայտ դարերի անյայտ սուրբը այսօր քաշել բերել է իր մօտ գիւղացուն։

Արդէն մատուռի շուրջը խմբւել է ուխտաւորը. փեթակի պէս ծեփւել է նա գիւղական խայտաճամուկ ամբոխով։ Հեռւից խուլ հասնում է նրա ծանր վժժոցը։

Իսկ մարդկանց կծիկը, որ քանդւել է զանազան գիւղերից, դեռ չէ վերջացել։

Նրանք կամաց-կամաց, առանձին հատուածներով, փունջ-փունջ շարժւում են դէպի սուրբը։

Մեր նորեկները տեղ հասնելով՝ կապոցները դիզեցին մի քարի մօտ և գնացին խառնւեցին մատուռի մէջ խցկւած ամբոխին, որ եռանդուն աղօթում էր այնտեղ։

Դեղին բարակ մոմերը լոյսի խաղաղ նշոյլներ էին փռում սևացած ու մոմածեի վէմի վրա։

Ամբոխը իր աղօթքի հետ էր։ Որը լալիս էր, որը գանգատւում, որն էլ աղերսում էր բարձրաձայն...

Դալուկ հարսն ու իր քաւորը առաջ անցան, խաչակնքեցին, համբուրեցին վէմը և նորից քիչ ետ կանգնելով՝ այդպէս մնացին իրանց տեղում մեխւած, վերացածի նման։

Աղօթում էին մտքներում։ Երկուսն էլ աղերս ունէին սրբի մօտ, երկուսն էլ նրա դուռն էին եկել իրանց խոստովանքը թափելու։

Մոմերի խաղաղ լոյսը թրթռում էր երկուսի դէմքին, որ գունատուած էին մի սրբազան լրջութեամբ և ինչոր ներքին խաղաղ վշտով։

Իսկ մատուռի մի անկիւնում քչքչում, երեխի պէս ծիծաղում էր մի աղբիւր, կարծես նոր լեզու էր առել, թոթովում էր և ուզում էր խօսել, խօսել ու չ՝հասնել։ Եւ այնպէս սիրտը լցած լեզին էր տալիս, այնքան դուրեկան ու կենդանի էր նրա ձայնը, որ ամենքը լուռ լսում էին նրան։

Ուխտաւորները այնտեղից ջուր էին վերցնում, խմում, քսում երեսներին...

Հարսն ու քաւորը դեռ երկար աղօթում էին։ Ոչ ոք չէր խանգարում նրանց։

Մատուռի դռան մօտ սակայն երկու պառաւ կանգնած թոնթորում էին և հետն էլ գլուխները տմբտմբացընելով՝ նայում «հարսին ու իր քաւորին»։

Նրանցից մինը յորանջեց, երեսը խաչակնքեց ու ասաց.

—Էհէհ... էրնակ խմանամ՝ ինչ մուրազի վրա էն, քէ մատաղ...

—Տուն ա քանդուել, տուն, չարդ տանեմ, տուն ա քանդուել, սուս կաց,—պատասխանեց միւսն ու հառաչեց։

Հարսն ու քաւորը աղօթեցին քիչ էլ ու դուրս եկան մատուռից։ Իսկ դուրսը արդէն մատաղները մորթել, բաժանել, հացի սուփրէքը բացել, սկսել էին կեր ու խումը։

Մանրիկ երեխաները հացի, գաթի պատառները դնչներին սեղմած՝ վազվզում էին դէս ու դէն ու մեղուների պէս վժվժում։

Զուռնան որքան ուժ ունէր՝ փչում էր ու ձայնը ծոր տալիս, ընկերն էլ դամը պահում, իսկ թմբկահարը այնպէս եռանդով էր ձայների ալիքը ծեծում, կարծես ուզում էր նրանց լեղին չորացնել։

Այս խառը, խուլ աղմուկի, խճճւած ու իրար հիւսւած ձայների միջից սկսեցին մէկ մէկ դուրս ձգուել գիւղական պարզուկ երգերի հատուկտոր փորձեր։

Յանկարծ զուռնան «ծէ՛ ծէ՛ ծէ՛» արեց ու ձայնը կտրեց։

Մի քիչ էլ, և ահա որտեղից էր՝ յանկարծ դուրս թռաւ՝ ճնշւած զգացումները պատռելով, մի երգ և ուղղեցին թեերով ետ մղելով իր վրա կուտակւած ընդհանուր աղմուկի ամպը՝ թռաւ վեր։

Եւ այն էր որ դուրս պրծաւ։

Աղմուկը լռեց, և լեռնային երգը թռչելով ու մեր լեռների նման ոլորւելով ու կոտրատւելով՝ գնաց հեռուն և երկարաձիգ հառաչեց ու կոտրւեց, մարաւ...

Թռաւ մի ուրիշ հոսանք նրա ետևից, ձայն տւեց հեռուն ու սուզւեց հեռուն ձորերի մէջ։

Այդ երգի մէջ վիշտն էր, որ չ'համբերեց, դուրս թռաւ կոտրւած սրտից, թափ տւեց իր մաղձն ու դառնութիւնը։

Եւ ամեն անգամ հառաչում էր ու հանգչում.

—Վայ լէ՛, վայ լէ՛, վայ լէ՛...

Էլ ո՞վ կ'համբերէր։ Գարուն է, եկել են ուխտ։ Սա մի կարմիր օր է, կանցնի կերթայ անդարձ։

Զահիլների սիրտը կրակ է ընկել. զգացումները բանալու ազատութիւն է։

Խմբւում են իրար մօտ, գտնում են իրար։

Ու պարերը սկսւում են։

Առաջ ծանր, համբատատան ու լուռ, և յետոյ շարժումների հետ արագանում է հոգեկան փոթորիկը—ու գնաց... կրակ է կտրում պարը։ Մեծ բոլորակ շղթան տենդոտ չափերով «հօփ, հօփ»—տոփում է գետինը ու մրրկի նման արագ պտոյտ գալիս։

Բայց ահա դարձեալ նւազում է պարը։ Եւ ահա սկսւում է պարերգը։ Երգում են փոխառփոխ տղէրքն ու աղջկէրքը։

Մէկը հեգնում է երգի մէջ, միւսը անիծում, մէկը գանգատւում է իր բախտից, միւսը խնդում...

Խումբը քիչ-քիչ ստւարացաւ։ Մեր նորեկները գնացին խառնւեցին պարին։

«Ջան». լսում էր այն կողմից, գոռում էին, ու պարը քանի գնում՝ տաքանում էր։

Պառաւներն էլ, որ նստել էին հեռուն կամ մեն գալիս դէս դէն, կուզէկուզ մլուլ գալով՝ հետևում էին պարին իրանց կոտրուած ժպիտներով ու հրճւում ջահիլների վրա։

«Ջան, ոտ վերցրէք. հօպ, հօպ», թնդում էր պարագլուխը։ Իսկ զուռնան հօ անխնայ տապակում էր պարի եղանակը ու կարծես եղի մէջ տժվժացնում։

Վիշտն ու ուրախութիւնը ձեռ ձեռի այնտեղ պար էին գառնում։

Քէֆը բոլորի սրտովն էր, բոլորի համար։ Գոռում էին այստեղ-այնտեղ, «հէյ» ձայն էին տալիս իրար։ Ու ծիծաղում, հրճւում էին մեծերը, փոքրերը, ծիծաղում էին անատամ պառաւները, մանրիկ ժպտում էին պստլիկ հարսները։

Ծիծաղում էր և արևը, որ եկել՝ երկնքի մէջ տեղը կանգնել թամաշա էր անում այս գժւած բազմութեանը։

Իսկ ժայռերի ծայրին, մատուռի կտրին սարեկները հօ այնպիսի ժխոր էին բարձրացրել, այնպէս վիճում, հանաք կռվշտում էին ու գժւում, որ կարծես աշխարքը իրանցն էր։

Այդ ընդհանուր ուրախութիւնից հեռու նստած էր սակայն մեր դալուկ հարսը և տխուր նայում էր պարին։

—Աղջի, ա՛յ Ջրատար, վեր կաց, վեր,—հեռու ժխորի միջից ժպտում ու ձայն էր տալիս ձեռով անելով՝ մի պառաւ հարսին, որը թէպէտ ձայնը չէր լսում, բայց հասկանում էր թէ ինչ են ասում իրան, և նայելով պառաւին՝ ինքն էլ ժպտում էր։

Բայց տխուր ու մոլոր...

—Վեր կաց, վեր,—ձեռով էր անում պառաւը, հետն էլ հասկանալով, որ հարսը պարելու հալ չունի։

Նա ախար հիւանդ էր, արդէն յոգնած ու նեղած...

Գարնան զարթեցնող ձայները, այդ նաշխուն ամբոխի ուրախ ժխորը ամեն կողմից պաշարելով՝ առել էին նրան իրանց թևին ու տանում էին նրա ցաւած հոգին։

Դէպի մի ուրիշ կեանք, որ արդէն վաղուց ապրուած էր։

Նա մոլոր հայեացքով նայում էր իր դէմը խլրտող ուրախութեանը, լսում էր ջահիլ, ճկուն ու արծաթի մաքուր ձայներ, որոնք նրան այնքան ծանօթ էին ու սիրելի, բայց և որոնք հիմա ոչ մի ուրախութիւն չէին նրա համար, այլ միայն այն կեանքն էին յիշեցնում։

Եւ երբ մի կերպ հանգստացրեց իր լալկան ու հիւանդ երեխային, բալուլը գիրկը առած՝ թաղուեց այդ յիշողութիւնների մէջ։

Յանկարծ կարծես զարթնեց մի խորին թմրութիւնից, ինչպէս օձը ձմեռայ քնից։ Իրան թւաց թէ սուտ էր այն, որ ինքը ամուսնացած է։ Սուտ էր կարծես, որ ահա այնտեղ, պարողների մօտ կանգնած կոպիտ մարդը իր ամուսինն է...

Ու եկան, մէկ մէկ, կարմիր շալքերով անց կացան նրա աչքի առաջով այն օրերը, երբ նա ազատ, գեղեցիկ և ուրախ աղջիկ էր։ Քանի պարերի, ուրախութիւնների ու հանդէսների կախարդիչ հրեշտակն էր եղել նա։ Քանի ջահիլ սիրտ էր կրակ գցել։ Նա այն ժամանակ ջահիլների արբեցնող ու գժւացնող կուռծաղիկն էր։

Յիշեց՝ ինչպէս ամենքը սուս էին կենում յան-

կարծ, երբ նա պար էր մտնում ու սկսում էր ոգևորված երգել։

Ուր էլ գնար նա—կրակ էր տանում հետը։ Եւ ջահիլները թէ մի-մին մէկ տեղ հաւաքուած՝ բարձր խօսալիս ու քրքջալիս էին լինում, նրան տեսնելիս շունչները պահում, աչքները գցում էին նրա հպարտ ու գեղեցիկ դէմքին ու ծածուկ ամեն մէկը իր մտքում հառաչում էր։

Յիշեց այդ բոլորը այնպէս պարզ, այնպէս կենդանի...

Բայց այդ մի վայրկեան էր միայն։ Նրա հոգին յոգնած էր հիմա և իզուր էր ճգնում նա մոռանալ այդ անգութ ներկան, զարթնել անցեալի ձայներով ու ապրել նորից այն կեանքը, որ հիմա թռչնի պէս թռել—կորել էր՝ ո՞վ գիտէ ուր։

Նա դարձեալ գլուխը կախեց ու ահ ու դողով, թաղուն, ամեն աչքից թաղուն՝ հայեացքը շեշտեց հեռու քարին նստած իր քաւորին։ Տեսաւ՝ ինչպէս նա աչքերը գետնին գցած մի տեղ էր անում։ Եւ թէև նա իրան չէր նայում, բայց զգաց, որ նրա սիրտը իր կողմն է թռչում։

Եւ իր սիրտն էլ ցաւեց. նա խղճահարեց և քնքշօրէն՝ մտովի փարեց այդ անբախտ էակին, որը սուրբի պէս գալիս էր իր հեռքից։

Իր կուսական սրտի առաջին սէրն ու ուրախութիւնը հէնց այդ երիտասարդն էր։ Շատ էր սիրում նրան, շատ էլ սիրւած էր նրանից։ Սիրեց նա, բայց իր կեանքը յաւիտեան կաշկանդող սրբավայրում նա իր կողքին տեսաւ ոչ թէ իր սիրելուն, այլ մի օտարի, որի կեանքի հետ փակեցին իր կեանքը մի տան մէջ։

Եւ այն էլ յաւիտեան, անխզելի և ընտանեկան սրբութեան անջնջելի կնիքով։

Հպարտ վարդը ոլորեցին փշի հետ, նա էլ լացեց, թառամեց ու թափուեց...

Բայց նրա հոգին փոթորկող զգացումը չմեռաւ, այլ թաղուեց նրա սրտի մի անկիւնում, կուչ եկաւ, որ մարդիկ չտեսնեն ու հալածեն։

Սէրը գտաւ իր գոյութիւնը ապահովելու գաղտնիքն ու հնարը։

Ջ'խախտուեց բայց ընտանեկան սրբութիւնը։

Սակայն սէրը, այդ ամօթալի ու անխուսափելի կապը, նա էլ եկաւ ու այդ երկու սրտերի վիճակը կարգաւորեց ուրիշ անբնական դրութեամբ։

Բիրտ ու վայրենի մարդկանց զոհ — այդ զգացմունքներով լի աղջիկը իրան նուիրւած երիտասարդին իր կնքահայրը դարձրեց։

Կնքահայրը—օրինական շղթան իր զգացումների։

Ու նրանց սէրը, որ հիմա կար, արդէն նման էր մի հեռաւոր ուրախութեան, որ գոյութիւն ունէր նրանց համար, բայց որը էլ չպէտք է այցելի իրանց։ Այլ երկուսը պիտի մխիթարուեն, մտովի ապրեն իրարով, իմանալով որ նա կայ—մի ինչոր հեռու տեղում։

Այդ կոչումը շատ էր հալածել երիտասարդին, բայց նա յետոյ հաշտուել էր, տեսնելով, որ իր հետ զոհուել է նաև մի քնքոյշ արարած, մի հպարտ կարապ, որ թէև ճերմակ, լի պէս լողում է լճի վրա, բայց ճակատին մի սև նշան կայ։

Այսօր միայն, գարնան տօնի և ուրախութեան հետ, զարթնեց և նրա հոգին։ Նրա սիրտն էլ ճխաց, ինչպէս նոր գարուն տեսած թռչուն...

Նա տխուր ու մռայլ հայեացքով նայեց ուրիշի կնոջը և հեռացաւ բազմութիւնից։

Գնաց. այնտեղ բլուրի միւս լանջին ժայռեր կա-

յին, նստեց այնտեղ և մէջքը դէմ տալով չոր քարին՝ հայեացքը սուզեց հեռուն։

Ի՞նչ էր որոնում այնտեղ։

Այնտեղ ոչինչ չկար որոնելու։ Ամեն ինչ իր մէջն էր։ Աչքերը դաժան ու պղտոր էին, առնական կուրծքը շնչատում էր։ Մի բան էր խոնաւանում աչքերում, բայց չէր գլորւում։

Նրանք քարացել էին։

Իսկ քամին հեռից բերում էր լեռնական երգի կտորտանքը, որ թռչկոտելով գալիս դիպչում էին ժայռերին ու փշրւելով թրթռում ու նւաղում էին։

—Վայ լէ, վայ լէ, վայ լէ...

ԱԶՈՒՂԻ ՀԻՔԻԱԹԸ

Նոյեմբերը սկսւում էր։

Նստել էի ձիս, եափընջիս ամուր փաթաթւել, ճամբայ էի գնում։ Ուշացել էի. շտապում էի, որ գոնէ գընամ, մի տեղ, մի գիւղ հասնեմ։

Նոր մթնելով էր, օրը ամպ, երկինքը կախւած, թթւած... Հազարատուտ մշուշը եկել՝ վիշապի պէս չոքել էր սարերի վրա։ Խոնաւ արտերում ողորմելի կերպով ցցւել էին գարու և ցորենի մնացորդները։

Ցուրտ էր, թոռ ու թաց...

Հեռու լեռան փեշերքին սևին էր տալիս մի աղքատիկ գիւղ, որի խրճիթները ասես փորփրած, քերծած տեղեր լինէին։ Նրա շուրջը կեանք չէր շարժւում։

Առաջ բարակ անձրևում էր, հիմա էլ փչեց ձիւնախառն քամին։ Գորշ խաւարը քանի գնաց խստացաւ, գիւղը կորաւ աչքիցս, սարերը թաղւեցին նոյնպէս խաւարի մէջ։

Մնաց միայն ցեխոտ ճամբան, որի վրա անձրևաջրի լճակներ էին գոյացել ու ողորմելի ձայնով շրփում էին ձիուս եռանդուն քայլերից։

Ես ոտ վերցրի։ Շրջակայքի տխուր տեսքը վատ երազի պէս ճնշում էր ինձ։ Կարծես շուրջս ամբողջ աշխարհը մեռել էր, ու ես էի միայն արշաւում այդ ա հապատի վրայով։

Յանկարծ ականջիս մի հաստ ու խռպոտ ձայն հասաւ։

Ո՞վ պէտք է լինէր, բացի պառաւ շնից, որ յայտնում է իր խռպոտ զարմանքը անակընկալ հիւրի պատճառով։ Թող զարմանայ ինչքան կուզէ. նրա խռպոտ ձայնը մի հաճելի երաժշտութիւն է ուշացած ճամբորդի համար։

Գիւղի ծայրից հիւրընկալ լոյսի փայլուն շողը արդէն բարևեց ինձ։ Ահա և գետնափոր խրճիթները։ Շները վրա տուին և ինձ մէջ առնելով՝ սկսեցին իրանց անտանելի հարց ու փորձը։ Ես էլ 'ի հարկէ նրանց մըտրակով պատասխանում էի, որ հետները գործ չունիմ։

Քշեցի ձիս խրճիթներից մէկի առաջ։

Ամառւայ աշխատանքներից մաշած ու յոգնած սայլը գլուխը դրել գետնին՝ հանգստանում էր։ Դռնից լոյս չէր երևում։ Երևի օդան ներսէներս էր։

Շների հաջոցը տանեցիներից մէկին դուրս կանչեց։ Դա մի մռայլ տղամարդ էր՝ ճրագը ձեռին։

—Էհէյ, ո՞վ է,—կանչեց նա։

—Ճամբորդ եմ,—ասի ես,—ուշացել եմ. հիւր չէ՞ք ընդունի։

Նա ինչոր փնթփնթաց քթի տակ, որ ես չ'լսեցի։ Շները հօ գլուխ էին տանում։ «Դէ ռնդ եղէք, է՞», ասաց ու մի քար շպրտեց նրանց կողմը։ Ձեռաց ձայները կտրեցին ու մռմռալով հեռացան խեղճերը՝ առանց իմանալու իմ ով լինելը, որ երևի նրանց համար շատ էր հետաքրքիր։

—Դէ ցած արի, է՞,—մօտենալով ինձ դարձաւ գիւղացին։

Մի բոպէից յետոյ ձիս քաշեցին ախոռը, իսկ ես խարխափում էի մի խաւար բաւիղում։ Եւ իսկապէս

ճրագ էի։ Դիպայ մի պատի. առաջիցս մի այծ էր կարծեմ որ փ։խաւ և քնած հաւը տհաճութեամբ ճչաց։

—Էս կողմը տիրացու, էդ ո՞ւր ես գնում, ետևից հասնելով՝ ասաւ հիւրընկալս և լոյս արաւ, որ դուռը տեսնեմ։

Վերջապէս օդայի դուռը նազ անելու ձայնով երկար ծռեց, և մենք մտանք ներս։ Օխա՛յ, օջախի կրակը ուրախ թրվռում էր ահագին կարմիր թիթեռի նման, հաճելի լոյսը սփռելով սևացած պատերին։ Կրակը ձմեռւայ վարդն է, ինչ սիրուն գրաւիչ վարդ, որ աշունքին է սկսւում բացւել։

Տան «ջոջը» նստել էր օջախի գլխին։ Նրա կողքին ու դէմուդէմը հինգ-վեց հոգի շարուած մտմտում էին։

Աղքատիկ խրճիթ, պատառոտած շորեր, արևակէզ, մաշուած դէմքեր,—այդ էր միայն աչքովս ընկնում՝ ուր նայում էի։

—Բարի աջողում։

—Այ, Աստծու բարին. հրամմէ, տիրացու,—հիւրասիրեց ջոջը։

Ու ես նստեցի։

Սովորական հարց ու փորձ։ Մի քիչ էլ խօսեցինք դէսից դէնից, և ես ամեն բան իմացայ։ Դրանք աղքատ մարդիկ էին, զրկանքներից ծիւրւել, ձախորդութիւններից ջարդուփշուր եղել, ոչնչացել ու հաշուել էին քմահաճ բախտի հետ։

«Ի՞նչպէս են կարողանում ապրել սրանք»—հէնց նոր էր այդ միտքը շարժւել գլխիս մէջ, որ տան ջոջը երեսը դարձրեց պատի հեռու անկիւնը, որ կորել էր սուերի մէջ։

Օհո՛, նոր նկատեցի, որ այնտեղ մարդ էր նստած։

10001
587

Ո՞վ պիտի լինէր։ Նայեցի, մէկը ծալապատիկ նստել էր այնտեղ մումիայի նման ու մաքերի եռև ընկած՝ ճնշուել ու սուս էր կացել։ Գլխին ծածկել էր մի տափակ փափախ։ Իսկ գլխավերևը պատից քաշ էր արել մի երկար տոպրակ, որի միջինը անշուշտ սաղ էր։

Էլ ի՞նչ խօսք, որ նա աշուղ էր։

Բայց ի՞նչ էր գնացել խցկըուել այն հեռու անկիւնը։

—Էլի ի՞նչ ես մտքերիդ եռևն ընկել,—ասաւ նրան ջոջը։ Մարդ Աստծոյ, մի բան ասա, մի բան ածա՝ լսենք։ Մտածելուց ի՞նչ դուրս կ'գայ։

—Լաւ է ասում Համբո-ամին, մի բան պատմիր, ականջ դնենք,—նկատեցին միւս գիւղացիք։

Նա կարծես խոր քնից արթնացաւ և ծանր վեր կենալով տեղիցը՝ մօտեցաւ օջախին։

ԿրՃը էր, մաշուած, տխուր։

Փափախը վերցրեց։ Ծերութեան ձիւնը նստել էր նրա մազերի ու բեխերի վրա. մօրուքը խուզած էր։ Հագին ունէր կապոյտ շալից, պատառոտուն, չորս-հինգ տեղից կարկատած մի երկար աբխալուղ։ Մէջքը պընդացրել էր լայն կաշէ գօտով։ Օձիքը չէր կոճկած. մի քանի քանդուած կոճակներից թաւամազ կուրծքը բաց երևում էր։ Նրա միջի կեանքը խուլ էր ու թաղուած։ Նա մի ողորմելի արարած էր, որին եթէ մի անգամ էլ փչէր կեանքի ձախորդութիւնը՝ անձայն կ'մարէր։

Զորացած ձեռները առաջ էր տարածել տաքանալու համար, բայց կրակը իրենից քիչ հեռու էր։ Քիչ էլ մօտեցաւ կրակին։ Եւ այն ջերմութիւնը այնքան նրա համար հաճելի էր, որ առաջ պարզած ձեռները կարծես հանգչում էին նրա կեանքի միակ նեցուկի վրա։

Եւ հոգատարութեամբ շոյում էին։

Ինչ որ մի բան փայլում էր նրա դէմքին։ Ժպի՞տ էր...

—Սա մեր գիւղի աշուղն է, տիրացու,—ասին ինձ։ Դէ՛ հալից ընկել, վեր է ընկել մեզ մօտ ու մի կերպ եօլա ենք տանում։

—Դէ սազը վեր բերէք, տեսնեմ,—ասաւ աշուղը, խօսելով նրանց հետ, բայց չտեսնող աչքերը գցելով դէպի հեռու անկիւնը։

Ցած բերին սազը, տուին իրան։

Աշուղը բաց արեց տոպրակը և զգոյշ շօշափելով դուրս հանեց սազը այնտեղից։

Լայն, մեծ սազ էր դա, տարիներից սևացած արդէն։

Նա սկսեց լարելը։ Ու շարունակ լսում էր՝ ծը՛նկ, ծը՛նկ—կարծես վերջ չունէր։ Բայց նա չէր շտապում. նրա խոռոչ աչքերը սակայն նայում էին մութ հայեացքով և թէպէտ այդ բոպէին նրա շրթունքների մօտ մի բան արդէն ծուել էր ժպիտի նման, բայց նրա աչքերը դարձեալ խիստ էին, դարձեալ մութ։ Այնտեղից ներս յաւիտեան լոյս չպէտք է մտնէր։

Խղճալի էր նա, ծեծուած ու կոր։

Ողորմելի ծնկծնկոցները հազիւ ներդաշնակութեան եկան։ Յետոյ նա եղանակեց մի նախերգան—անորոշ ձայների մի կուտակութիւն, բայց որը տեղ-տեղ մելամաղձոտ ու գանգատուող շեշտեր ունէր։ Կամաց-կամաց եղանակը որոշուեց. նա հասկանալի էր դառնում ու ազդում։ Ձայները ոլորուում, թռչկոտում, թրվռում էին ու տակից գողտուկ լաց լինում։ Նրանք հառաչում էին աղքատութեան մրմունջով և հանգչում խուսափող բախտի կարօտի նման։ Մէկ-մէկ էլ կարծես արցունքի

կաթող շիթեր լինէին, որ իրար հետևից մերթ արագ, մերթ ծանր կաթում էին ու երբեմն էլ կուլ գնում։

Ա՜յ թէ ինչո՞ւ համար էր նա սաղը այդպէս ամուր սեղմել կրծքին։ Դա նրա հարազատ զաւակն էր, և ինչ մեծ, ինչ մեծ մխիթարութիւն...

Խրճիթը քիչ-քիչ կենդանացաւ, պատերի մէջ շունչ լցուց. նրանք տխուր ժպտացին։

Իսկ օջախի կրակը չրթում, խաղում ու ժպտում էր երեխի նման. նա էլ էր ուրախացել։ Օդան հիմի տաք էր, հաճելի. ես թեք ընկայ պատին, որ աւելի հաճութեամբ ականջ դնեմ։

Նա սկսեց մի երգախառն հէքիաթ։ Սկսեց ոգել հանդիսաւոր ձայնով. բարձրացրեց ձայնը, ու մենք աւելի սուս կացանք։

Մի քանի խօսք էլ, և ահա ունկընդիրներս թողնենք այս յիմար, խեղճ ու դաժան իրականութիւնը ու թռանք, գնացինք այնտեղ, ուր այնպէս խիզախ ու յաղթանակօրէն թռչում ու կտրում էր աշուղի երևակայութեան թեը։ Յանկարծ մեր աչքին ծաղկեց մի ցնորալի կախարդական աշխարհ, որից իմ կողքի ունկընդիրները թեթև և ուրախ շունչ քաշեցին։ Այդ աշխարհը առաջ չկար խրճիթում.—նա փակւած էր մեզանից մի դուռ, հաստաբակ վարագոյրով։ Եկաւ մէջտեղ այս ողորմելի, ծեր, մաշւած մարդը, փչեց, ցնդեցրեց դիւթական խօսքով այդ մշուշ վարագոյրը, բացեց մեր աչքին ուրիշ աշխարհներ, որ թէև այդ բոլորին իսկապէս չկային, սակայն նրանք աշուղին տւին երիտասարդական կորով ու եռանդ, վառեցին ունկընդիրների աչքում ուրախութեան կրակը, իսկ ի՞նձ... Ես էլ էի հեռւում թէ վերջը ո՞ւր է տանելու մեզ այս աշուղը։

Կամաց-կամաց ես էլ նրանց հետ մոռացայ ամեն

բան, և մենք բոլորս միասին գնացինք այդ երեքուն ու ծաղկալի աշխարհները...

Եւ իրաւ, ի՞նչպէս էր պատմում նա այն ժամանակ, ի՞նչպէս ոգևորւած շեշտում էր ամեն մի բառը, մէկ էլ ի՞նչպէս հպարտ թափահարում էր գլուխը։ Հպարտ էր նա այդ միջոցին, ինչպէս մի հինաւուրց արծիւ, որի առաջ փռւած է լայն իր անծայր թագաւորութիւնը։

Երևակայութեան հզօր ու անվերջ աշխարհն էր այդ, ուր ոչ մարդն էր մեր մարդու նման և ոչ էլ մարդու խօսքը մեր խօսքի պէս։

Խօսք... եթէ նա մի անգամ դուրս էր թռչում մարդու բերանից—էլ չէր մնում անկատար։ Ինչպէս արևի ճառագայթը, որ ուր ընկնում է՝ այնտեղ ծնում, ստեղծում է։ Դու ցանկացիր միայն, ասա՝ ի՞նչ ես ուզում, և ահա իզձդ կատարւում է։

Ու պատմում էր աշուղը, ոգում իր բարձունքից, հրամայում էր։ Եւ նրա բարձր ձայնից պատերը, մռայլ անկիւններն ու կորացած գիւղացիք հեւհեւ ականջ էին դնում։

Ես չեմ պատմի հէքիաթը. նա երկար էր, իրար հիւսւած. և ո՞ր մէկ տեղը կարող ես յիշել։ Ուր վերջանում էր մի երջանկութիւն, այնտեղ սկսւում էր ուրիշը. մի աշխարհի ափին բացւում էր ուրիշ լայն ու դիւթական աշխարհ...

«Խփեց լեզին քարը անգին, դէմը ելաւ սև արաբը։ Ասաւ՝ «եկա՛յ, հրամայիր, թագաւորը ապրած կենայ»։—Իմ հրամանն այն է—ասաւ,—անհա մի ժամ քեզ ժամանակ. կանգնիր շուտով պալատիս դէմ շքեղ պալատ աղամանդէ, որ ոչ որդիս, ոչ հարսնացուս իրանց

օրում տեսած չլլ'ին, որ պալատը Զին'մաչինի նրա կըշտին խրճիթ թույ։

Ասաւ քնեց. քնեց, զարթնեց։

«Պատրաստ է,» ասաւ

«Պատրաստ է,» ասին։

Ու խնդրակ գնաց թագաւորներին, գնաց մունետիկ ողջ ժողովրդին, որ գան հարսանիք։

Եկան շատ արքաներ, զարմանք ընծաներով, եկաւ լցուեց ժողովուրդը ու կապեց ծով։ Քաջ ուժեղները ճեղքեցին ամբոխն ու առաջ անցան, և շատ անարի անճար մարդիկ էլ ոտնակոխ եղան։

Առաւ արքան արքայորդուն, արքայորդին իր հարսնացուն, եկան շքով ու գնացին դէպի պալատն երանութեան։

Ու գնացին ու ինչ տեսան, ինչ տեսնէին որ լաւ լինէր։

Արեգակի դէմն էր առել շքեղ պալատն աղամանդէ, ու պատած էր ջահիլ դրախտ նրա շուրջը գոտու նման։

Երկու ասլան պէտ, ոսկեբաշ, ծանր ու խոնարհ գլուխ տուին.—մտան պարտէզ գեղահրաշ, հազար թռչուն դայլայլեցին։

Հազար նոճի գնում գալիս, օրօրւում էր երջանկօրէն, բլբուլների արբուն տաղից ծաղկունք ուշից գընում էին։

Հայրենիքը ծաղիկների անմահացնող տուեց բուրմունք, շատրւանների դէպի արև մարգարիտներ ցայտեցրին։

Ու գնացին դռան դիպան, ու շուռ տուին մեծ բանալին. — քառասուն տեսակ եղանակեց այն կողպէքը հրաշալի։

Հարսնևորը մտաւ պալատ ու նոր քէֆի ծայրը բացւեց»...

Աշուղի երևակայութիւնը կրակւած գնում էր ու մեղ էլ հետը տանում։ Նա ցնցւում, ժպտում էր և ոգևորւած ձայնը հիմա թնդում էր։

Իսկ շուրջը լուռ, շուրջը դիւթւած, հմայւած։ Գոռում էր նա։

Խելագարւել էր, ինչ է։

Հասաւ երգերի հերթը։ Նա ոգևորւած բարձրացրեց ձեռքը, զարկեց սազին, ցնցեց լարերը և հնչեցրեց սիրահար արքայորդու հարսանիքի երջանիկ երգը... խրճիթում։

—Ջան,—լսեց այս ու այն կողմից։

Հրճւում էին։

«Հրամայեց թագաւորը, բացւեց սուփրէն հրաշալի, ամեն երկրի պահծու գինով, բարիքներով անհատնելի։

Ու քառասուն օր եղաւ մեծ հարսանիք, ու քառասուն օր մեծ յարգ ու յարգինք, քառ'սուն օր տեղաց մարգարտի կարկուտ և ոսկի անձրև առատ ու անտուտ։

Եւ ահա սկսեցին արքայորդու երանութեան օրերը։

Սկսեց սէրը յաւերժական, կեանքը անհատնելի երանութեան պալատում...

Երանութեան պալատո՞ւմ..., Աշուղն էլ, նրա ունկընդիրներն էլ մտան այդ երանութեան պալատը։ Իսկ ես մնացի այդ աղքատիկ, տխուր ու մռայլ խրճիթում...

Նայում էի նրա մերկ պատերին, շրջապատող աղքատութեանը, այդ խեղճ աշուղին, այդ վերացած, երազող դէմքերին,—և տարօրինակ բան. կարծես՝ էլ նրանք ինձ մօտ չէին, նրանք արդէն այն աշխարհումն էին,..

Կրակը ժպտում, քռքռում, օդող էր ելնում, լիզում էր օջախի սև պատերը։ Եւ ուրախ կենսալի լոյսը ողողում էր բոլորի դէմքը։

Կէս գիշերին միայն վերջացաւ երկար հէքիաթը։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Столичная Библиотека
7/XI-1922

Ոնկրնդիրները շնչնակալ եղան աշուղից ու կամաց-կամաց գլուխն իջուցին տնեը։

Հարկասոր էր քնել։ Փաթաթուեցի եափընջուս մէջ ու պառկեցի։ Ճրագը հանգած էր։ Օջախի կրակն էր միայն, որ հիմա փլփլում ու տխուր-տխուր ժպտալով իմ դէմքին՝ պատրաստւում էր մեռնելու, մարելու։

Իսկ տանիքից բաց արած նեղ լուսանցին թակում էր քամին, որ դուրսը չափ էր ընկել դաշտերում ու ոռնում։

Շուրջս ամեն ինչ աւելի տխուր դառաւ։ Քունս չէր տանում, միտք էի անում։

Ո՞ւր մնաց հէքի։ Դը։ Մարեցին կախարդական աշխարհները, ինչպէս մի շքեղ սիմֆոնի, և խրճիթի մռայլ պատերն էին միայն, որ նօթերը կլուսած ինձ էին նայում։

Քնած էր աշուղը, քնած էր նաև նրա սազը։

«Հը՜մ», մտածում էի ես, «քիչ չէ՞ր լինի—հալած ոսկի ցայտող շատրուանները, ադամանդէ պալատ, հրաշալի սիրոց, որ ամեն մի հրամայելուն բացւում է աշխարքիս ամեն տեսակ բարիքներով»...

Դաժան աղքատութիւն... բայց չէ, նա էլ գութ ունի դարձեալ։ Նա ուտում՝ կրծում է մարդու կեանքը, բայց չի ատում մարդուն այնքան։ Այդ դաժան ճիւաղը՝ գալարւելով մարդու ամբողջ էութեանը, հանդցնելով արևի լոյսը նրա աչքին, կորացնելով ու մղելով դէպի գետնափոր խրճիթը, դէպի գերեզմանը,—թողնում է սակայն երազական աշխարհը նրան...

Գնա, թաղւիր այդ հեռու, երերուն ու ծաղկալի աշխարհները. գնա, երազիր ու թռիր, ինչքան տեսնում են հոգուդ կարօտ աչքերը, ինչքան կարում են թևերը քո օրհնեալ երևակայութեան...

Է՜հ, ի՞նչ կայ. այդ էլ մի մխիթարութիւն է...

Բազմաբ. Հայոց
Հոլիսամեան Դպրոց

ՀՀ Ազգային գրադարան
NL0339406

27979